ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **07.05.2024թ.**

Հիմք ընդունելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) նախագահի 2024 թվականի մայիսի 3-ի N 04-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում փոփոխություն կատարելու հարցը քննարկելու և հաստատելու, ինչպես նաև Տեսչական մարմնի 2024 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն հավանություն տալու նպատակով 2024 թվականի մայիսի 6-ից 7-ը անցկացվել է արտահերթ նիստ՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում փոփոխություն կատարելը:
2. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2024 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Ավանեսյան	- ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ)
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Տ. Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Լ. Բալյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Հ. Լիլոզյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ա. Ավանեսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
2) Ռ. Սարգսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
3) Տ. Հակոբյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
4) Ա. Խոջոյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
5) Լ. Բալյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
6) Վ. Սիրունյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
7) Ժ. Մայիլյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
8) Տ. Քեյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
9) Շ. Դանիելյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
10) Հ. Լիլոզյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի բոլոր հարցերին **10 կողմ, 0 դեմ:**

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում փոփոխություն կատարելը:

2. Սահմանել, որ 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում փոփոխությունները ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից համաձայնությունը ստանալուց հետո:

3. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2024 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ